

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

07.03.2013թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու.Պողոսյանը, Լ. Պետրոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժնի պետ Ն. Մուշեղյանը:

Նիստում լսվեց հետևյալ հարցը.

1. «2012 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն. Մուշեղյան/

Որոշվեց՝

Հաստատել 2012 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:

/Անհատական/

12.04.2013թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Գևորգյանը, Վ. Դավթյանը, Յու.Պողոսյանը, Լ. Պետրոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Դաշյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյունջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ Ռ. Շարոյանը:

Նիսարում լսվեցին հեղկյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2008 թվականի հոկտեմբերի 1-31-ը ՀՀ 512 տնային տնտեսությունում իրականացված ժամանակի օգտագործման ընտրանքային հետազոտության անվանազերծված տվյալների բազան Լեհաստանի գիտությունների ակադեմիայի, փիլիսոփայության և սոցիոլոգիայի ինստիտուտի ասպիրանտ՝ Եվա Յարոշին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշվեց՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Լեհաստանի գիտությունների ակադեմիայի, փիլիսոփայության և սոցիոլոգիայի ինստիտուտի ասպիրանտ՝ Եվա Յարոշին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2008 թվականի հոկտեմբերի 1-31-ը ՀՀ 512 տնային տնտեսությունում իրականացված ժամանակի օգտագործման ընտրանքային հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

/Անհատական/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան «Ավագ Սոլյուշնս» խորհրդատվական ընկերությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշվեց՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ «Ավագ Սոլյուշնս» խորհրդատվական ընկերությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

/Անհատական/

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2004-2011 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտությունների անվանազերծված տվյալների բազաները «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշվեց՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2004-2011թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ

անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

/Անհատական/

4. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու» և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2012 թվականի հաշվեկշիռները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Հայրապետյան/

Որոշվեց՝

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 09.11.2009 թվականի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 1-ին տողի «15970.6» թիվը փոխարինել «15953.14» թվով, 2-րդ տողի «521192.2» թիվը փոխարինել «522070.5» թվով, ընդամենը տողի «716195.85» թիվը փոխարինել «717056.69» թվով:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2012 թվականի հաշվեկշիռները՝ ըստ ծրագրերի:

/Անհատական/

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

5.1. Հաղորդում՝ ԱՄՆ Նյու Յորք քաղաքում 2013 թվականի փետրվարի 22-ից մարտի 1-ը «ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 44-րդ նստաշրջանին և հարակից սեմինարներին» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան/

5.2. Հաղորդում՝ Բելգիայի Բրյուսել քաղաքում 2012 թվականի մարտի 5-ից 7-ը «Նոր տեխնիկաներ և տեխնոլոգիաներ վիճակագրության համար» թեմայով կոնֆերանսին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Վ.Դավթյան, Ռ.Շաբոյան/

5.3. Հաղորդում՝ Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 2012 թվականի մարտի 7-ից 23-ը Ֆրանսիայի Ժողովրդագրական հետազոտությունների ազգային ինստիտուտի

(INED) «Մահացության պատճառները Կովկասում և Կենտրոնական Ասիայում» ծրագրի շրջանակում՝ Հայաստանի Հանրապետության մասով, մահացության ցուցանիշների և մահացության պատճառական կառուցվածքի թվային շարքերին առնչվող հարցերի, ժողովրդագրական հիմնական ցուցանիշների (բնակչության, ծննունդների, մահվան դեպքերի, այդ թվում՝ մանկական մահացության, դրա պատճառների, սեռատարիքային կառուցվածքի) տվյալների ուսումնասիրման և համեմատական վերլուծության (Հայաստանի և Վրաստանի) գործնական աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ. Կոյումջյան/

5.4. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2013 թվականի մարտի 28-ից 29-ը «ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 49-րդ նիստին» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ. Միրզոյան/

5.5. Հաղորդում Լյուքսեմբուրգ քաղաքում 2013 թվականի ապրիլի 4-ին «Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված Վիճակագրական Համագործակցության համար ԵՀՔ Արևելքի Ռազմավարության համար աշխատանքային խմբի երկրորդ հանդիպմանը» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա. Սաֆյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

/Անհատական/

6. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազան ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածքային գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշվեց՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածքային գրասենյակին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

/Անհատական/

22.04.2013թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Վ.Դավթյանը, Լ. Պետրոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը:

Նիստում լսվեց հետևյալ հարցը.

1. 1. «Հայաստանի Հանրապետության 2010-2012 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Վ.Սարոյան/

Որոշվեց՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2010-2012 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության 2010-2012 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

/Անհատական/